



ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

22 հոկտեմբեր, 2014թ.

ք. Երևան

ՀՀ 2014-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի քննարկում Շիրակի մարզում

2014 թվականի հոկտեմբերի 22-ին Գյումրիում կայացավ ՀՀ 2014-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի հանրային քննարկում՝ Շիրակի մարզի ՔՀԿ-ների մասնակցությամբ: Այն կազմակերպվել էր ՀԵԻԱ-ի կողմից Եվրամիության կողմից՝ ֆինանսավորվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում:

Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության համագործակցության բաժնի տնտեսական հարցերով խորհրդատու Ալեասանդրո Զանտոն կարևորեց նմանաբնույթ հանրային քննարկումների իրականացումը՝ տեղեկացնելով, որ շահագրգռված է այս հարցով:

Միջոցառման ընթացքում «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի ղեկավար Կարեն Զադոյանը ասաց, որ այս փաստաթուղթը պետք է անցնի հանրային քննարկումների փուլով. «Եթե այս քննարկումների արդյունքում՝ հանձինս քաղաքացիական հասարակության, հնարավորություն եղավ ներագրել և փոփոխել այն, ապա կարելի է ասել, որ քաղաքացիական հասարակությունն իրենից Հայաստանում ինչ-որ բան է ներկայացնում, հակառակ դեպքում մենք պետք է երկու եզրահանգում անենք, նախ որ դեռևս չունենք լուրջ լծակներ՝ ազդելու կառավարության նախագծի վրա, և երկրորդ՝ հանրային քննարկումները կարող են իմիտացիոն բնույթ կրել, լուրջ առաջարկություններից կառավարությունը որևէ մեկը չընդունի, միայն ցուցադրի, որ փաստաթուղթը քաղաքացիական քննարկումների փուլով է անցել», - շեշտեց պարոն Զադոյանը:

Հակակոռուպցիոն ռազմավարության աշխատանքային խմբի քարտուղար Մարիամ Գալստյանը նշեց, որ ՀՀ 2014-2018թթ. հակակոռուպցիոն ռազմավարության նախագծի շրջանակներում ընտրվել են 4 թիրախային ոլորտներ՝ առողջապահության, կրթության, պետական եկամուտների հավաքագրման և ոստիկանության ծառայությունների մատուցման ոլորտները. «Այդ առումով, կոնկրետ այս չորս ոլորտներում պետք է իրականացվեն աշխատանքները, եթե այստեղ լուրջ արդյունքներ ունենանք կանցնենք առաջ՝ ընդգրկելով նաև դրանք», - ասաց կառավարության ներկայացուցիչը:

Այսօրվա քննարկմանը մասնակիցները նաև դիտեցին ՀՀ բժշկատեխնիկական փորձաքննության գործակալության և քաղաքացու միջև ծագած վեճի մասին ֆիլմ, որը լուծվել է հոգուտ քաղաքացու: Մասնակիցները կարևորեցին սոցիալական ոլորտի ընգրկումը ծրագրում, առաջարկ եղավ ռազմավարությունում նախատեսել քաղաքացիական կազմակերպությունների մասնակցությունը, որպես ռազմավարության մոնիթորինգ իրականացնող կառույցներ՝ Կառավարության կողմից համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսելով մոնիթորինգների իրականացման համար:


Հանրային քննարկման ընթացքում ՔՀԿ-ների կողմից արված բոլոր առաջարկությունները կամփոփվեն և կներկայացվեն ՀՀ արդարադատության նախարարություն:

Ծրագրի հիմնական նպատակն է մեծացնել ՔՀԿ-ների դերը հակակոռուպցիոն բարեփոխումների խթանման և իրականացման գործում: Ծրագրի շրջանակներում կհզորացվեն ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների մոնիթորինգի և վերահսկողության կարողությունները: Կազմակերպվեն հակակոռուպցիոն դարձնացները ՀՀ մարզերում ՔՀԿ-ների և ԶԼՄ-ների համար՝ կոռուպցիոն բնույթի և տեղեկատվության ազատության խնդիրներն առավել լավ ըմբռնելու համար: Այս միջոցառումների նպատակը հակակոռուպցիոն գործողությունների իրականացման առկա հնարավորությունների խորացումն է: Հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման և համապատասխան մոնիթորինգային, վերահսկողական և հետաքննական ծրագրերի իրականացման նպատակով կտրամադրվեն փոքր դրամաշնորհներ: Հակակոռուպցիոն ինստիտուցիոնալ մեխանիզմների ամրապնդման համար ՔՀԿ-ների մասնակցությամբ կվճակվի ՔՀԿ-կառավարություն կայուն երկխոսություն:

Ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի կողմից (իրականացնող)՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ի հետ համագործակցությամբ (գործընկեր): Ծրագրի տևողությունը 3 տարի է (2014 թվականի հունվարից 2016 թվականի դեկտեմբեր): Ծրագրի բյուջեն կազմում է 650.000 եվրո:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան (ՀԵԻԱ) ստեղծվել է 1995թ.-ին: ՀԵԻԱ-ի առաքելությունն է նպաստել Հայաստանում իրավունքի գերակայության, ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացմանը, որտեղ բնակչությունը իրագրել է, իսկ նրա իրավունքները՝ պաշտպանված:

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը (ԻԱԿ) գործում է ավելի քան 10 տարի: ԻԱԿ-ի առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը և այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասն ապահովման:

Լոա  **Ինֆորմացիայի ազատության կենտրոնը** **և** **Եվրոպական միություն** **հանուն և** **համահունչ համահարգող Լոաին Կառապետանին. ախատանքային օրենին. ժամը 9.00-**

Եվրահանձնաժողովը ԵՄ գործադիր մարմինն է:

Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա
Հասցե՝ Նալբանդյան 7, բն. 2
Երևան, Հայաստան, 0010
Հեռախոս: +37410 54 01 99
Հեռապատճե: +37410 58 02 99

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հասցե՝ Բուզանդի 1/3
Երևան, Հայաստան, 0010
Հեռախոս: +37410 56 03 60
Հեռապատճե: +37410 56 03 60

Ծրագիրը
Ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից
Հայաստանում Եվրոպական միության պատվիրակություն
Հեռախոս +37410 54 64 94
Հեռապատճե +37410 54 64 95

Եվրամիությունն ունի 28 անդամ երկիր, որոնք որոշել են աստիճանաբար կապակցել իրենց նոտ-հաուն, ռեսուրսներն ու ուղիները: 50 տարվա ընդարձակման ժամանակահատվածում նրանք միասին ստեղծել են կայունության, ժողովրդավարության ու կայուն զարգացման տարածք՝ պահպանելով մշակութային զանազանությունը, հանդուրժողականությունը և յուրաքանչյուրի անկախությունը: Եվրամիությունը հանձնառու է կիսել իր ձեռքբերումներն ու արժեքները իր սահմաններից այն կողմ գտնվող երկրների ու ժողովուրդների հետ: